ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

Անգլիական բանուորների հանդամանքների մասին մի հետաքննութիւն։ Գերմանիայի արդիւնագործները ունին մի կենդրոնական ընկերութիւն։ կան նաև ընկերութիւններ, որոնց նպատակն է արդիւնագործութեան շահերը պաշտպանել։ Առաջինը կոչւում է Centralverband deutscher Industrieller, երկրորդները՝ Interessenwahrungsvereine. Այդ «կենդրոնական ընկերութիւնը» և երկրորդներից չորսը անցեալ տարի մի մասնաժողով կազմեցին, որը պէտք է գնար Անգլիա՝ այդ երկրի բանուորների դրութիւնը ուսումնասիրելու համար։ Ճանապարհորդութիւնը տեւեց 1889 թւի սեպտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 21-ը, ուրեմն չորս շաբաթ։ Մասնաժողովի անդամները ամեն օր այցելում էին գործարանատէրերին, բանուորների քարտուղարներին և պաշտօնեաներին, հարց ու փորձ անելով բանուորների հանդամանքների մասին. նոքա փոքրիկ ճամբորդութիւններ էին անում Լօնդօնից դուրս, արձանագրելով իրանց տեսածն ու լսածը և հաւաքում էին ամեն տեսակ վիճակագրական տեղեկութիւններ։ Այդ բոլոր նիւթերը նոքա իրանց հետ բերին հայրենիք և մշակւած ձևով հրատարակեցին մի հատորով [1]), որոնցից առաջին մասում խօսւում է բանուորական հանդամանքների մասին, երկրորդում ապւած են մասնաժողովի չորս անդամների զեկուցումները, որ նոքա արեցին ընկերութեան նիստում դեկտ. 13-ին։ Վերջիններս ծառայում են իբր բացատրութիւն և լրացում առաջին մասի։

Մասնաժողովի գլխաւոր գործը պէտք է կազմէր ուսումնասիրութիւնը բանուորական ընկերութիւնների, որոնք Անգլիայում յայտնի են Trade Unions (Տրէդ-Ունիօն) անունով։

---

[1]) Berichte der von industriellen und wirthschaftlichen Vereinen nach England entsendeten Commission zur Untersuchung der dortigen Arbeiterverhältnisse. Herausgegeben von den betreffenden Vereinsvorständen. Berlin 1890. Verlag von Titscher u. Rödell.

Ցաւտնի է, որ Տրէդ-Ունիոնները կազմուեցին կամաց-կամաց և մեծ դժուարութիւնների հանդիպելով։ Մինչև 1869 թուականը կառավարութիւնից նոքա միայն «համբերուած» էին, բայց չէին ճանաչուած որպէս օրինական ընկերութիւններ և այդ պատճառով չէին վայելում պաշտպանութիւն օրէնքի և դատարանների կողմից։ Օրինակ, նոքա չէին կարող կալանաւորել տալ ընկերութեան դանձարանին դիպչող պաշտօնեային։ Տրէդ-Ունիոնների էութեան և կանոնադրութեան մասին մի թագաւորական մասնաժողով նշանակուեց 1865 թուականին։ Այդ մասնաժողովի հաւաքած տեղեկութիւնները հասցրին այն եզրակացութեան, որ օրէնդրութիւնը պէտք է աւելի որոշ դիրք տայ բանուորական միութիւններին և պէտք է նոցա դանձարանները առանց պաշտպանութեան չը թողնէ։

Այդ պահանջման հետևանքն էր, որ 1869 թուականին տուեց տրէդ-ունիոնների հովանաւորող մի ժամանակաւոր օրէնք։

Հէնց նոյն այդ ժամանակ մտցրուեց Գերմանիայում այն օրէնքը, որով ազատութիւն էր տրւում բանուորներին միանալու (Coalitionsfreiheit)՝ օրավարձը բարձրացնելու և գործադուլներ անելու համար։ Ցառաջադիմական կուսակցութեան ներկայացուցիչ Մաքս Հիրշ և ընկերվարական կուսակցութեան ներկայացուցիչ Ի. Բ. ֆօն Շվայցեր ուզում էին եռանդով իրարից գերազանցել՝ Գերմանիայում չ'եղած տեղից ստեղծել անգլիական տրէդ-ունիոնների նման բանուորական միութիւններ։ Բայց ահա զանազանութիւնը. Անգլիայում տրէդ-ունիոնները չեն կրում կուսակցական բնաւորութիւն, մինչդեռ գերմանական կուսակցութիւնների ներկայացուցիչները ջանում էին նման բանուորական միութիւններ ստեղծել կուսակցական նպատակներին ծառայեցնելու համար։ Այնտեղ՝ ընկերութիւններ, որոնց սկզբնաւորութիւնը հասնում է մինչև անցեալ 18 դարը, երբ համքարական կազմակերպութիւնը ոչնչացրուեց, իսկ այստեղ՝ դեռ նոր նոր սկսել էին վերացնել միութիւններ կազմելու արգելքները։

1869-ից դէս տրէդ-ունիոնները դեռ պէտք է կուէին, որ միւս տեսակ արդիւնաբերական ընկերութիւնների հետ հաւասար իրաւունքներ ձեռք բերէին։ Միմիայն 1876 թուականին վերացուեց վարպետների և ծառաների մասին հին օրէնքը (Master and Servent Act), որի ղօրութեամբ բանուորը, իւր պայմանից դուրս գալու պատճառով, բանտարկութեանն էր դատապարտւում. մի բան, որը Շոտլանդիայում դեռ այժմ էլ կայ։ 1876 թ. օրէնքով որոշեցին տրէդ-ունիոնների իրաւունքները՝ վերաբերեալ այն վէճերի, որոնք ծագում են գործատէրերի և բանուորների մէջ։

Ահա տրէդ-ունիոն'ների կազմակերպութիւնը։ Դոքա կամ տեղական ընկերութիւններ են, կամ կենդրոնական կազմակերպութիւններ։ Թէ առաջինները և թէ երկրորդները մի որոշ արհեստի կամ արդիւնաբերութեան վերաբերեալ ընկերութիւններ են։ Կենդրոնական ունիոնները (միութիւն) կամ ամբողջ թագաւորութեան վերայ են տարածում իրանց գործունէու-

թիւնը, կամ երկրի մի մասի վերայ և կամ կոլոնիաների և վերջապէս նաև օտար երկիրների վերայ։ Օրինակի համար, Amalgamated Society of Carpenters and Joiners (ատաղձագործ արհեստաւորների միացեալ ընկերութիւնը) 1886 թ. վերջում ըմբռնում էր 440 ընկերութիւններ, որոնք այսպէս էին բաժանուած. Անգլիա՝ 338, Շոտլանդիա՝ 15, Իրլանդիա՝ 70, Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ 25, Կանադա՝ 6, Նոր-Զէլանդիա՝ 10, Աւստրալիա՝ 22, Հարաւային Աֆրիկա՝ 4, ընդամենը 25.781 անդամներով։

Կենդրոնական Տրէդ-Ունիոնները ունին տեղական ճիւղեր. այդ ճիւղերը միացած են վիճակային կամ դիստրիկտների ընկերութիւններով, բայց նոքա բոլորը ունին մի գործագիր մասնաժողով։ Այդպէս էլ զանազան գործարանական քաղաքներում. մի քանի տրէդ-ունիոն'ներ իրար հետ չփւում են կամ հաղորդակցում trade councils կոչած խորհուրդների միջոցով, իսկ բոլոր տրէդ-ունիոնները միասին ունին, ամենքի շահերը պաշտպանելու համար, մի Parlamentary Committee (պարլամենտական մասնաժողով) Լոնդոնում, որոնց անդամները անգլիական պարլամենտի անդամներ են և մի Trade-union-congress (տրէդ-ունիոնների կոնդրէս)։

Գերմանիայում էլ կան տեղական ընկերութիւններ (մասնագիտական ընկերութիւններ-Fachvereine) և կենդրոնական կազմակերպութիւններ։ Բայց այդ տեղական ընկերութիւնները իրար հետ ոչ մի կապ չ'ունին։ Այդ իսկ պատճառով բոլոր փորձերը, որ արուած են Գերմանիայում անգլիականի նման տրէդ-կոնսիլներ և տրէդ-ունիոն-կոնգրեսներ կազմելու, ի դերև ելան։ Այն, ինչ Գերմանիայում կրում են կենդրոնական անունը, միութիւններ չեն տեղական ընկերութիւնների, այլ ընկերութիւններ են, որոնց անդամները ցրուած են նաև կայսերութիւնից դուրս կամ երկրի մի որոշ մեծ մասի վերայ։ Բայց տեղական ընկերութիւնների կենդրոնացնելը օրէնքով արգելուած է։ Այն իրաւունքները, որ վայելում են անգլիական տրէդ-ունիոնները՝ գործարանատէրերի և բանւորների և կամ բանւորների իրար մէջ ծագած վէճերի մէջ խառնուելու—գերմանական ընկերութիւնները չ'ունին. սոցա հետ կապուած չեն օգնութեան և ապահովութեան դանձարաններ, ինչպիսիք այդ ունին տրէդ-ունիոնների չատերը՝ բանւորներին օգնելու համար անգործութեան, հիւանդութեան, ծերութեան և վտանգի ժամանակ։ Արդարև, Գերմանիայում էլ կան օգնութեան ազատ դանձարաններ (freie Hülfscassen), կան նաև պաշտպանող դանձարաններ (Unterstützungscassen). բայց դոքա առանձին, առաջինների հետ ոչնչով չը կապուած և բանւորների օրավարձի հետ կապ չ'ունեցող ընկերութիւններ են։ Գերմանական փէշաքաւորների ընկերութիւնները չփւում են պետական վարչութեան օրգաններից միմիայն ոստիկանութեան հետ, առանց յարաբերութիւնների մինիստրութեան հետ։ Դորա հակառակը, անգլիական առևտրական մինիստրութիւնը (Board of trade) ունի մի սեպհական պաշ-

տանեալ—Labour Correspondent կոչուած—որի գործը հենց տրէդ-ունիոնների հետ է։ Այժմեան այդ պաշտօնեան է պարոն Բուրնէտ (Burnett), որը առաջ բանուոր էր, յետոյ եղաւ քարտուղար տրէդ-ունիոններից մէկում, ուստից նա յետոյ կանչուեց առևտրական մինիստրութիւնը։ Գերմանական, բայց մանաւանդ պրուսական բարձր պաշտօնեաների մեծագոյն մասը դժուարութեամբ կարող են ըմբռնել, որ մի ինտելիգենտ բանուոր, թէկուզ քաղաքա-տնտեսապէս կրթուած մի ընկերութեան քարտուղար կարող է դառնալ մի տային սօցիալիստական մի մինիստրութեան մէջ։

Մասնաժողովի հարց ու փորձերից երևացել է, որ տրէդ-ունիոնների ղեկավարների հեղինակութիւնը բանուորների վերայ չի հիմնուում այնքան այն բարերարութիւնների վերայ, որ տրէդ-ունիոնները անում են մասնաւորների համար գործի պակասութեան, հիւանդութեան ժամանակ և այլն, այլ այդ հեղինակութիւնը բղխում է ղեկավարների բարոյական դիրքից և դորա վերայ հիմնուած ազդեցութիւնից։

Նկատենք, որ տրէդ-ունիոնների անդամները իրանց վերայ նայում են ոչ որպէս պրոլետարիատի վերայ, այլ իբր մի տեսակ բանուորական արիստոկրատների վերայ։ Եւ իրաք, անդամ ընդունում են միմիայն նոքա, որոնք իրանց արհեստի մէջ ընդունուած օրենքան միջին վարձը ապահով կերպով վաստակում են։ Այդպիսով դանաղանուում են «կրթուած բանուորները» ոչ կրթուածներից։ Այդ կրթուածներն են կազմում չորրորդ դասակարգը, մինչդեռ մնացածները կազմում են իսկական պրոլետարեան կամ հինգերորդ դասակարգ։ Տրէդ-ունիոնիստները այդպիսով կազմում են բանուոր դասակարգի բարձր խաւը։

Տրէդ ունիոնիստների պահանջները մեծապէս տարբերուում են ընկերվարական կուսակցութեան ղեկավարների պահանջներից։ Առաջինները ջանք են դործ դնում, որ բանուորները կարելիին չափ լաւ վարձատրուեն, բայց չեն հերքում նաև կապիտալիստների պահանջները, որոնց համար էլ նոքա ընդունում են, որ պէտք է իրանց օգուտը ստանան։ Այդպիսով Անդլիայում մենք ականատես ենք մի երևոյթի՝ տրէդ-ունիոնական բանուորները վաղուց է որ կռիւ են սկսել զուտ ընկերվարականների դէմ, որոնց գլխաւոր ղեկավարն է Անդլիայում Բօրնս (Burns), որը դրդում է հինգերորդ դասակարգին ընդդէմ չորրորդ դասակարգի։ Բօրնս սկսել է Անդլիայում կազմակերպել այդ հինգերորդ դասակարգը (unskilled men), որպէս զի դորանով լառաջացնէ «աշխատանքի ազգային ֆեդերացիայի միութիւնը», կազմակերպութիւն, որը վերջերումս զարմանալի յաջողութիւններ ցոյց տուեց։